ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15.07.2011 թ. Գետաշեն համայնքի ղեկավարի հաշվետու ժողովից

15.07.2011 թ. տեղի ունեցավ Գետաշեն համայնքի ղեկավարի 2011թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացումը:

Ժողովին մասնակցում էին մոտ 48 մարդ, ավագանու անդամներ, բուժ. աշխատողներ, գյուղապետարանի աշխատակիցներ մանկավարժներ:

Հաշվետու ժողովին ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակից Ա. Հովհաննիսյանը:

Գյուղապետ Գ. Հովհաննիսյանի կողմից համայնքի բնակիչներին տեղեկացվեց, որ համապատասխան մարմիններին ներկայացվել է մայիսի 5-ին համայնքում կարկուտի պատճառած վնասների չափերը և արդյունքների մասին կտեղեկացվի ազգաբնակչությանը: Նա ներկայացվեց նաև համայնքում կատարված աշխատանքների ընթացքը, ճանապարհների բարեկարգման, համայնքի գազաֆիկացման ինչպես նաև համայնքի սոցիալ տնտեսական զարգացման վերաբերյալ այլ բնույթի հարցեր:

2011թ. առաջին կիսամյակի ընթացքում համեմատած 2010թ. նույն ժամանակահատվածի հետ պակասել է հավաքագրման մակարդակը, հատկապես սեփական եկամուտների գծով:

6 ամսների տվյալներով համայնքի բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ հողի հարկ 7267.7 հազար դրամի դիմաց 3762.5 հազար դրամ կամ 51.8%

բ/ գույքահարկ 965.2 հազար դրամի դիմաց 833.9 հազար դրամ կամ 86.4 %

գ/ վարձակալական վճարներ 2500.0 հազար դրամի դիմաց 474.7 հազար դրամ կամ 19%

դ/ տեղական տուրքեր՝ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություններ 60.0 հազար դրամի դիմաց 54.6 հազար դրամ կամ 91%,

ե/ ծառայություններից գանձվող վճարներ 300.0 հազար դրամի դիմաց 139.3 հազար դրամ կամ 46.4%

զ/ պետության կողմից դոտացիա 9092.1 հազար դրամի դիմաց 9092.1 հազար դրամ կամ 100%

Ծախսային մասը կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ աշխատավարձի վճարում 5981.9 հազար դրամ

բ/ սոց. վճարների վճարում 1240.2 հազար դրամ

գ/ ընդհ. բնույթի ծախսերի և ծառայությունների ձեռք բերում 4545.0 հազար դրամ

2011 թվականի ընթացքում աշխատավարձի և սոց վճարի պարտք գրեթե չի գոյացել:

Համայնքի ղեկավարը բնակիչներին տեղեկացրեց, որ ինչպես Ապրիլի 24-ի՝ «Մոմավառություն», Մայիսի 9-ի, Հունիսի 1-ի «Խաղաղություն» միջոցառումները լուսաբանվեցին Արմենիա հեռուստաընկերության կողմից, այնպես էլ տարվա ընթացքում կազմակերպվելիք մյուս մեծ միջոցառումները կհեռարձակվեն հեռուստատեսությամբ: Համայնքի ղեկավարը նշեց, որ Գետաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը ընդգրկվել է «Նախադպրոցական միկրոծրագրում», համայնքի բյուջեից այդ նպատակի համար կհատկացվի 2000.0հազար (երկու միլիոն դրամ): Նշվեց նաև, որ շարունակելու է բարեկարգել և ավազապատել ներհամայնքային ճանապարհների մնացած մասը:

2011 թվականի ընթացքում առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեից 50.0 հազարական դրամ է հատկացվել համայնքի այն ընտանիքներին, որտեղ մահ է գրանցվել:

Նա նշեց, որ համայնքում առկա հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն սեփական եկամուտների հավաքագրմամբ, որի վրա խիստ ուշադրություն է դարձնելու և լինելու է հետևողական:

Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝

1/ Մանկապարտեզի վերագործարկում:

2/ Խիստ անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը՝ որը 1965 թ. է շահագործվել և գտնվում է անմխիթար վիճակում:

3/ Մշակույթի տան հիմնանորոգում:

4/ Համայնքի ընդհանուր գազաֆիկացում:

Համայնքի ղեկավար Գ. Մխիթարյան

Քարտուղար Լ. Քանանցյան